ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2023թ. սեպտեմբերի 15-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:
2. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի՝ 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:
3. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ լուծարքային շրջանների արդյունքների մասին:
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կանոնակարգի ընդունում:
5. Անվանական կրթաթոշակի թեկնածուների երաշխավորում:
6. Հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
7. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը (ծրագիրը կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի՝ 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար, պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի՝ 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարգարյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ լուծարքային շրջանների արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար, պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ տվյալներ ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ լուծարքային շրջանների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Հարությունյանը, ի.գ.թ., դոցենտ Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կանոնակարգի ընդունում:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գ.Ղազինյանն ընդհանուր գծերով ներկայացրեց ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1/3 որոշմամբ հաստատված՝ «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման օրինակելի կանոնակարգի հիման վրա մշակված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կանոնակարգի նախագիծը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ընդունել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կանոնակարգը.

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորին հաստատելու ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կանոնակարգը:

5. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակի թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Ստեփանյան Աննա (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.
2. Սիմոնյան Հրանտ (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ.
3. Ղազարյան Իգր (մագիստրատուրա, 1-ին տարի), Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ.
4. Մովսիսյան Էդուարդ (բակալավրիատ, 4-րդ կուրս)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վլադիկ Ներսիսյանցի անվան կրթաթոշակ.
5. Ալոյան Անահիտ (բակալավրիատ, 4-րդ կուրս)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ:

6. ԼՍԵՑԻՆ. Հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

6.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Դավիթ Ղուկասյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավիթ Ղուկասյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 15 կրեդիտ կրթական բաղադրիչից, 03.11.2021 թվականից մինչև 27.04.2023 թվականը աշխատել է «ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» փակ բաժնետիրական, ընկերության միջազգային իրավական բաժնում՝ որպես կրտսեր իրավախորհրդատու, իսկ 28.04.2023 թվականից մինչ օրս՝ իրավախորհրդատու, ձեռք է բերել և ուսումնասիրել թեկնածուական ատենախոսության պատրաստման համար անհրաժեշտ, մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականություն, այդ թվում՝ գիտական աշխատություններ, ատենախոսություններ, մենագրություններ, գիտական հոդվածներ, կատարել միջազգային փորձի ուսումնասիրություն, ներկայումս աշխատում է «Գլոբալիզացիան որպես պետության ինքնիշխանության հիմնական մարտահրավեր» գիտական հոդվածի վրա, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության

ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Անի Սարգսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Սարգսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 35 կրեդիտ կրթական բաղադրիչից, 01.11.2021 թվականից մինչև 23.01.2023 թվականը աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես առաջատար մասնագետ, իսկ 24.01.2023 թվականից մինչ օրս՝որպես գլխավոր մասնագետ, ձեռք է բերել և ուսումնասիրել թեկնածուական ատենախոսության պատրաստման համար անհրաժեշտ մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականություն, այդ թվում՝ գիտական աշխատություններ, ատենախոսություններ, մենագրություններ, գիտական հոդվածներ, կատարել միջազգային փորձի ուսումնասիրություն, «Իրավունքի որոշակիության վերլուծությունը բազմությունների տեսության համատեքստում» վերտառությամբ զեկույցով հանդես է եկել ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Ֆիլիանա Բելլույանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ա.Ասատրյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ֆիլիանա Բելլույանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 27 կրեդիտ կրթական բաղադրիչից, անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից, ձեռք է բերել թեկնածուական ատենախոսության պատրաստման համար անհրաժեշտ մասնագիտական գրականություն, ԲՈԿ-ի կողմից երաշխավորված գիտական պարբերականին է ներկայացրել գիտական հոդված, որը վերաբերում է միջազգային տնտեսական հարաբերություններում տնտեսական

սանկցիաների կիրառման տեսական և գործնական առումներին, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Սիրանուշ Գրիգորյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ա.Ասատրյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրանուշ Գրիգորյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 28 կրեդիտ կրթական բաղադրիչից, հաշվետու ժամանակահատվածում՝ 2022 թվականի հոկտեմբերից մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի, այցելել է հեղինակավոր արտասահմանյան համալսարաններ: Այս փորձառությունը կայուն կապեր է հաստատել ականավոր գիտնականների, պրոֆեսորադասախոսական կազմի և միջազգային իրավունքի փորձագետների հետ, ատեստավորել նրան, ուսումնասիրել է թեկնածուական ատենախոսության պատրաստման համար անհրաժեշտ մի շարք գիտական հոդվածներ, մասնագիտական գրականություն, ատենախոսություններ, անցկացրել է քննարկումներ արտասահմանյան գիտնականների և հետազոտողների հետ, ուսումասիրել է միջազգային փորձը և պրակտիկան, այս պահին աշխատում է հոդվածի վրա՝ նվիրված միջազգային իրավունքում պատժամիջոցների և միակողմանիսահմանափակող միջոցների հիմքում ընկած իրավական և տեսական հիմքերի պատմական զարգացմանը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Արթուր Աբովյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ա.Ասատրյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթուր Աբովյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 50 կրեդիտ կրթական բաղադրիչից, 130 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Արթուր Դանիելյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթուր Դանիելյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 24 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, ձեռք է բերել անհրաժեշտ մասնագիտական գրականություն, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Լևոն Պետրոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լևոն Պետրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 4 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, հեղինակել է «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հարցերը քրեական իրավունքում» վերտառությամբ գիտական հոդվածը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.8. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը

ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Մանե Մարկոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մանե Մարկոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 26 կրեդիտ կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, հեղինակել է «Ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ գիտական հոդվածը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.9. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Անի Զոհրաբյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Զահրաբյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 33 կրեդիտ կրթական բաղադրիչից, անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից, ձեռք է բերել անհրաժեշտ մասնագիտական գրականություն, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.10. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Աննա Մկրտումյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աննա Մկրտումյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, աշխատում է գիտական հոդվածի տպագրության վրա, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.11. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա հայցորդ Սյուզաննա Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սյուզաննա Վարդանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից, 10 կրեդիտ պրակտիկայից, 55 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.12. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հայցորդ Աննա Հարությունյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աննա Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 21 կրեդիտ կրթական բաղադրիչից, անհրաժեշտ կրեդիտները պրակտիկայից, 56 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.13. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը

ամբիոնի առաջին տարվա հայցորդ Հերբերտ Հարությունյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հերբեր Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ 43 կրեդիտ կրթական բաղադրիչից, անհրաժեշտ կրեդիտներ պրակտիկայից, 68 կրեդիտ հետազոտական բաղադրիչից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

7. Ընթացիկ հարցեր:

7.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ի.գ.դ., պրոֆեսոր Հարություն Մարտինի Խաչիկյանի՝ «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մագարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ ի.գ.դ., պրոֆեսոր Հարություն Մարտինի Խաչիկյանի՝ «ՀՀ քրեակատարողական իրավունք» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության:

7.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ի.գ.թ., դոցենտ Տարոն Սիմոնյանի՝ «Իրավունքի սիներգետիկա կամ Արդի իրավունքի համալիրություն» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մագարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ ի.գ.թ., դոցենտ Տարոն Սիմոնյանի՝ «Իրավունքի

սիներգետիկա կամ Արդի իրավունքի համալիրություն» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

7.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ԵՊՀ Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի դասախոսների համահեղինակած «ՀՀ արդարադատության համակարգը» վերտառությամբ դասագիրքը վերահրատարակության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մագարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ ԵՊՀ Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի դասախոսների համահեղինակած «ՀՀ արդարադատության համակարգը» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել վերահրատարակության:

Խորհրդի նախագահ ***Գ. Ղազինյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Երևանի Պետական Համալսարանի իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2023-2024 ուսումնական տարվա

Նիստ 1-ին
(սեպտեմբեր)

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:
2. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:
3. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ լուծարքային շրջանների արդյունքների մասին:
4. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կանոնակարգի ընդունում:
5. Անվանական կրթաթոշակի թեկնածուների երաշխավորում:
6. Հեռակա ուսուցման ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստ 2-րդ
(հոկտեմբեր)

1. Գիտական հաղորդում:
2. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Հովհաննիսյան):
3. Հաղորդում առկա ուսուցմամբ բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների՝ համապատասխանաբար դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):
4. Հաղորդում 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների ընթացքի մասին:
5. 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողների

սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստ 3-րդ

(նոյեմբեր)

1. Իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանի տարեկան հաշվետվությունը:

2. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստ 4-րդ

(դեկտեմբեր)

1. Գիտական հաղորդում:

2. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյան):

3. Հաղորդում ընթացիկ քննությունների արդյունքների և 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստության մասին:

4. Ֆակուլտետի կարիերայի կենտրոնի տարեկան հաշվետվությունը:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստ 5-րդ

(փետրվար)

1. Գիտական հաղորդում:

2. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ասատրյան):

3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

4. Հաղորդում հեռակա ուսուցմամբ մագիստրոսների թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների մասին (զեկ՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

5. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստ 6-րդ

(ապրիլ)

1. Գիտական հաղորդում:

2. Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Գաբուզյան):

3. Հաղորդում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

4. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստ 7-րդ

(մայիս)

1. Գիտական հաղորդում:

2. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Հայկյանց):

3. 2023-2024 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

4. 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:

5. Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստ 8-րդ

(հունիս)

1. Գիտական հաղորդում:
2. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Վ.Այվազյան):
3. 2024-2025 ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածության և դասախոսների անհատական բեռնվածության հաստատում:
4. Իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին:
5. Ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը՝ կատարված աշխատանքների մասին:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստ 9-րդ

(հուլիս)

1. Գիտական հաղորդում:
2. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Դիլբանդյան):
3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության մասին (հաշվետվություն և պլանավորում):
4. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը հրավիրվում են դրա տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն իր իրավասության շրջանակներում, քննարկում և լուծում է ֆակուլտետի գործունեության հիմնական հարցերը, այդ թվում՝ ֆակուլտետի ուսումնական և գիտական աշխատանքի,

միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված խնդիրները, լսում է ֆակուլտետի ամբիոնների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները, ֆակուլտետում իրականացվող գիտական հետազոտությունների, դրամաշնորհային ծրագրերի, գործուղումների վերաբերյալ հաշվետվությունները, անցկացնում է ֆակուլտետի գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնների վարիչների և այլ անձանց ընտրության մրցույթներ, լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված և համալսարանի կանոնադրությունից բխող այլ հարցեր:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն, ըստ անհրաժեշտության, գումարում է խորհրդի արտահերթ նիստեր՝ խորհրդի իրավասությանը ենթակա հրատապ լուծում պահանջող հարցերի քննարկման և լուծման նպատակով: